ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Ք. ԱՊԱՐԱՆ, ԲԱԴՐԱՄՅԱՆ 26, ՀԵՌ. (0252) 2-43-93, ՖԱՔՍ (0252) 2-44-45

N – 020 / 191
«18» հոկտեմբերի, 2011 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Ս. Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 06.10.2011թ նիստի NN 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48 որոշումները:

Հարգանքով

Քաղաքապետ՝ Գ.Ս.Աբրահամյան

Ելք
<< Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի քարտուղարու-
թյան ընդհանուր բաժին
«19» 10 2011թ.
Մուտք № 7-826

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 48 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ հոկտեմբերի 20-ին Ապարանի բժշկական կենտրոնի վերակառուցած շենքի բացումը կկատարվի ՀՀ Նախագահի կողմից, իսկ բժշկական կենտրոն տանող ասֆալտապատ ճանապարհը կարիք ունի փոսային նորոգումների, որը մրցույթի անցկացման միջոցով կատարելը ժամանակի առումով անհնարին է, ուստի՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարանի քաղաքապետին՝ Ապարան քաղաքի Գ. Նժդեհի անվան փողոցի ասֆալտի նորոգման աշխատանքների իրականացման գնումը կատարել մեկ անձից և շուկայական արժեքից ավելի մատչելի գներով՝ ուղղակի պայմանագիր կնքելու միջոցով:

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 47 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ Ա. ԹՈՐԳՈՄՅԱՆԻ ԵՎ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԸ ՉԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Ապարան քաղաքի բնակիչներ Ասլիկ Թորգոմյանի և Աղաբեկ Սարիբեկյանի կողմից մարվել են բնակելի շինությունների գույքահարկի գծով ապառք գումարները, ուստի համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Չիջել Ապարան քաղաքի բնակիչներ Ասլիկ Թորգոմյանի և Աղաբեկ Սարիբեկյանի բնակելի շինությունների գույքահարկի գծով առաջացած տույժի գումարները, հետևյալ չափերով՝
- Ասլիկ Թորգոմյանի – 11470 դրամ
- Աղաբեկ Սարիբեկյանի - 14700 դրամ

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 46 - Ն

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ նշված տարածքը չի հակասում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներին, ուստի համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջների՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Լարիսա Բարսեղյանին պատկանող գեղեցկության սրահի զբաղեցրած 44,8 քմ հողատարածքը /կադաստրային ծածկագիր 0130 - 0072/ ուղղակի վաճառքով սեփականության իրավունքով օտարելու Լարիսա Բարսեղյանին՝ 1քմ – ը՝ 810 դրամ կադաստարային արժեքով:
2. Քաղաքապետին՝ ապահովելու համապատասխան փաստաթղթերի ձևակերպումը:

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 45 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԻ ԲԱՑՎԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝դասական աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող N 47 բազմաբնակարան շենքի 1-ին հարկում գտնվող 117,63 քմ բացվածքի տարածքը:

2.Հաստատել բացվածքի տարածքի օտարման մեկնարկային գինը՝ 530.000 դրամ և հավելաճի քայլը՝ 30.000 դրամ:

3.Քաղաքապետին՝ապահովել աճուրդի հրապարակայնությունը, ձեռնարկել նախապատրաստական համապատասխան աշխատանքներ՝ աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 44 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝դասական աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 1703 քմ հողատարածքներ հասարակական կառուցապատման և 48 քմ հողատարածքներ՝ ավտոտնակներ կառուցելու նպատակով:

2.Հաստատել հողատարածքների օտարման մեկնարկային գները և հավելաճի քայլը՝

ա/ 1լոտ - կոդ ԱԵՄԱ/1 - 600քմ - մեկնարկային գինը՝ 300.000 դրամ,հավելաճի քայլը՝ 18000 դրամ

բ/ 1լոտ - կոդ ԱԵՄԱ/2 – 115 քմ - մեկնարկային գինը՝ 93150 դրամ, հավելաճի քայլը՝ 7000 դրամ

գ/ 1 լոտ – կոդ ՆՓ/2 – 928 քմ – մեկնարկային գինը՝ 751.680 դրամ, հավելաճի քայլը՝ 40.000 դրամ

դ/ 1 լոտ – կոդ ԴՓ/1 – 60 քմ – մեկնարկային գինը՝ 90.000 դրամ, հավելաճի քայլը՝ 5.000 դրամ

ե/ 1 լոտ – կոդ ԲՓ46/1 – 24 քմ – մեկնարկային գինը՝ 36.000 դրամ, հավելաճի քայլը՝ 2000 դրամ

զ/ 1 լոտ – կոդ ՄՓ11/1 – 24 քմ – մեկնարկային գինը՝ 36.000 դրամ, հավելաճի քայլը՝ 2000 դրամ

3.Քաղաքապետին՝ապահովել աճուրդի հրապարակայնությունը, ձեռնարկել նախապատրաստական համապատասխան աշխատանքներ՝ աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանու նախագահ՝ Գ. Աբրահամյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 43 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.01.2011 ԹՎԱԿԱՆԻ «ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. 2011 թվականի հունիս – սեպտեմբեր ամիսների ընթացքում քաղաքապետարանի և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների համար գնված գույքն ընդգրկել գույքագրման ցանկում՝ համաձայն հավելվածի:

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

Հավելված 1

2011 թ հունիս – սեպտեմբեր ամիսներին ձեռք բերված
Հիմնական միջոցների ցանկն ըստ կազմակերպությունների

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հ/Հ	Գույքի անվանումը	Չ/Մ	Քանակը
1	Ձեռնասայլակ	հատ	1
2	Փողոցային լուսավորության ջահեր	հատ	8
3	Հեռախոսի ապարատ	հատ	2
4	Մետաղյա աստիճան	հատ	1

«Ապարանի քաղաքային համայնքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ

Հ/Հ	Գույքի անվանումը	Չ/Մ	Քանակը
1	Աշուղական տարազ	հատ	4
2	Ժող. պարերի տաբատ	հատ	8

«Ապարանի քաղաքային համայնքի թիվ 1-ող մանկապարտեզ» ՀՈԱԿ

Հ/Հ	Գույքի անվանումը	Չ/Մ	Քանակը
1	Հագուստի պահարան	հատ	6

«Ապարանի քաղաքային համայնքի թիվ 2-ող մանկապարտեզ» ՀՈԱԿ

Հ/Հ	Գույքի անվանումը	Չ/Մ	Քանակը
1	Մանկական սեղան	հատ	6
2	Մանկական աթոռ	հատ	24

«Ապարանի քաղաքային համայնքի մանկապատանեկան
ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ

Հ/Հ	Գույքի անվանումը	Չ/Մ	Քանակը
1	Համակարգչային մոնիտոր	հատ	1

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 42 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ և 62-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջների՝
Ապարանի քաղաքային համայնքի 2011 թ բյուջեի պահուստային ֆոնդի մնացորդային 1600,0 հազ. դրամի նպատակային ծախսն ապահովելու, պետության կողմից պատվիրված լիազորությունների իրականացման նպատակով անասնաբույժների պահպանման համար նախապես պլանավորված 720,0 հազ. դրամի հատկացման չափը նվազեցնելու և 600,0 հազ. դրամի չափով հատկացնելու պատճառով՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեով ձևավորված պահուստային ֆոնդի մնացորդային 1600,0 հազ. դրամն ուղղել բյուջեի ընթացիք ծախսերի մասին:
2. Պակասեցնել համայնքի բյուջեի եկամուտները՝ համաձայն N1 հավելվածի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 3 հավելվածի:
5. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 4 հավելվածի:

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

Հավելված N1

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.10.2011 ԹՎ. N – 42 Ն ՈՐՈՇՄԱՆ

N1 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		-120.0	-120.0	0.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝		-120.0	-120.0	x
1342Բ	բ)Անասնաբ. ծառայություններ		-120.0	-120.0	x

Ապարանի քաղաքապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

Հավելված N2

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.10.2011 ԹՎ. N - 42 Ն ՈՐՈՇՄԱՆ

N2 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-120.0	-120.0	X
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	+200.0	+200.0	x
2161	1.	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	+1100.0	+1100.0	x
2421	4	2	1	Գյուղատնտեսություն	-120.0	-120.0	x
2951	9	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	+100.0	+100.0	x
3071	10	7	1	Սոցիալական հատուկ ատոնություններ (այլ դասերին չպատկանող)	+200.0	+200.0	x
3100	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	-1600.0	-1600.0	x

Ապարանի քաղաքապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

Հավելված N3

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.10.2011 ԹՎ. N - 42 Ն ՈՐՈՇՄԱՆ

N3 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		-120.0	-120.0	X
4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	-104.4	-104.4	x
4131	- Սոցիալական ապահովության վճարներ	4131	-15.6	-15.6	x
4221	- Ներքին գործուղումներ	4221	+100.0	+100.0	x
4238	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	+700.0	+700.0	x
4252	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	+450.0	+450.0	x
4261	- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	+100.0	+100.0	x
4267	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	+50.0	+50.0	x
.4634	- Այլ նպաստներ բյուջեից	4729	+200.0	+200.0	x
4771	- Պահուստային միջոցներ	4891	-1600.0	-1600.0	x

Ապարանի քաղաքապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

Հավելված N4

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.10.2011 ԹՎ. N -42 Ն ՈՐՈՇՄԱՆ

N6 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տնտեսագիտական դասակարգման հոդված	Ընդամենը (u.8+u.9)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2000	**X**	**X**	**x**	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**		**-120.0**	**-120.0**	**X**
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում		+200.0	+200.0	x
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	+200.0	+200.0	x
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		+1100.0	+1100.0	x
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	+700.0	+700.0	x
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	+250.0	+250.0	x
				- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	+100.0	+100.0	x
				-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	+50.0	+50.0	x
2421	4	2	1	Գյուղատնտեսություն		-120.0	-120.0	x
				- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	-104.4	-104.4	x
				- Սոցիալական ապահովության վճարներ	4131	-15.6	-15.6	x
2951	9	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		+100.0	+100.0	x
				- Ներքին գործուղումներ	4221	+100.0	+100.0	x
3071	10	7	1	Սոցիալական հատուկ ատոնություններ (այլ դասերին չպատկանող)		+200.0	+200.0	x
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	+200.0	+200.0	x
3100	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		-1600.0	-1600.0	x
				- Պահուստային միջոցներ	4891	-1600.0	-1600.0	x

Ապարանի քաղաքապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2011 թվականի N - 41 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 9 –ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին լսելով Ապարանի քաղաքապետի հաղորդումը՝ համայնքի 2011 թ բյուջեի 9 – ամիսների արդյունքների վերաբերյալ՝ նշում է, որ, Ապարանի քաղաքապետի կողմից հետևողական աշխատանքներ են տարվել քաղաքային համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման և բյուջետային միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Ապահովվել է համայնքի բյուջեի, բյուջեի ամսական կատարողականների ու ծախսերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ ինտերնետային կայքի, քաղաքացիների սպասարկման կենտրոնի միջոցով, որոնք հասու են եղել բոլոր բնակիչներին:

Շարունակվել են հողի և գույքի բազաների ճշգրտման, եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճշգրիտ արտահայտման, տեղական հարկերի վճարման գործում համայնքի բնակիչների պատասխանատվության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հարկերի հավաքագրման ուղղությամբ տարվել է ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, հարկատուներին ուղարկվել են ծանուցումներ, անպատասխանատուներին՝՝ նախազգուշացումներ:

2011 թվականի տարեկան բյուջեի վարչական եկամուտները նախատեսված 122620,5 հազար դրամի դիմաց կազմել են 90373.7 հազար դրամ, կամ՝ կատարվել է 73.7 % -ով, իսկ 9 - ամսվա պլանը կատարվել է 98,3 % -ով:

Համայնքի 2011 թ բյուջեի 9 – ամսվա եկամուտները ձևավորվել են՝

-- հարկերի և տուրքերի մասով՝ 17876.1 հազար դրամ, պլանային ցուցանիշը կատարվել է 93,1%- ով, որից՝

- հողի հարկի մասով՝ 101.1 %-ով, կամ՝ նախատեսված 6375.0 հազար դրամի դիմաց կատարվել է 6445.6 հազ. դրամ,
- գույքահարկի մասով՝ 98.2 %-ով, կամ՝ 6900.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 6776.5 հազ. դրամ,
- տեղական տուրքերի մասով՝ 104,3 %-ով, 2325.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 2426.2 հազ. դրամ,
- պետական տուրքերի մասով՝ 61.9 %-ով, 3600,0 հզ. դրամի դիմաց կատարվել է 2227.8 հազ. դրամ,
- Այլ եկամուտների մասով՝ 98.0 %-ով, կամ՝ 10443.9 հազ.դրամի դիմաց կատարվել է 10234.7 հազ.դրամ, որից՝ պատվիրված լիազորությունների մասով՝ 93.3 %-ով, նախատեսված 1893.9 հազ. դրամի դիմաց հատկացվել է 1767.65 հազար դրամ:
- Գույքի վարձակալության եկամուտների մասով՝ 112,5 %-ով, կամ՝ նախատեսված 3000,0 հազ. դրամի դիմաց կատարվել է 3374.1 հազ. դրամ:

- օրենքով և իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջե է մուտքագրվել՝ 1.5 հազ. դրամ:
- Վարչական գանձումների մասով՝84.5%-ով, 5100,0 հազ.դրամի դիմաց կատարվել է4307.5 հազ. դրամ, որից՝
- տեղական վճարների մասով՝ 71.0 %-ով, 525,0 հազ. դրամի դիմաց կատարվել է 373,0 հազ.դրամ,
- մուտքեր տույժերից և տուգանքներից՝93.3 %-ով,450,0 հազ.դրամի դիմաց կատարվել է 420,0 հազ.դրամ,
-Ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան հատկացվել է 100.0 %-ով, նախատեսված՝ 60831.1 հազ դրամը հատկացվել է ամբողջությամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի մասով՝ 78.0 %-ով, կամ՝ նախատեսված 8250.0հազ. դրամի դիմաց կատարվել է 6495.4 հազ. դրամ:

2011 թ համայնքի բյուջեի 9 - ամսվա սեփական եկամուտների կատարման ամփոփ պատկերը՝

Հ/Հ	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	2011թ 9 - ՊԼ	ԿԱՏԱՐՎԵԼ Է ՀՀ	ԿԱՏԱՐՄԱՆ %
1	Հողի հարկ	637	644	10
2	Հողի և գույքի վարձ	300	337	11
3	Գույքահարկ՝	690	677	98
4	Տեղական Տուրքեր՝	232	242	10
5	Տեղական վճարներ	525	373	7
6	Ինքնակամ կառույցի վճար	450	785	17
7	Պետական տուրքեր	360	222	61
8	Վարձավճարներ	412	351	85
9	Վարչական տուգանք	450	420	93
10	Այլ եկամուտների մասով	0	1.	15
Ընդամենը՝ վարչական		2775	2634	95
Կապիտալի գործառույթից		825	649	78
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝		3600	3284	91

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին միաժամանակ նշում է, որ համայնքի բյուջեի ձևավորման և տեղական հարկերի հավաքագրման գործում դեռևս կան լուրջ թերություններ ու բացթողումներ: Դեռևս զգալի թիվ են կազմում նախորդ տարիներին չմուծած հարկերի ապառքներն ու տույժերը, հարկերը մուծելուց խուսափողները, որոնց նկատմամբ արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվում,բացի բացատրական և նախազգուշացնող միջոցներից:

Դեռևս մեծ թիվ են կազմում համայնքից երկար տարիներ բացակայող պարտքատերերը, մահացածների ժառանգությունը չբացողները, կան նաև անհայտ հողատերեր:

Ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի 9 – ամիսների կատարման վերաբերյալ Ապարանի քաղաքապետի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան